101(1405). ԹՄԲՈՒԿ

Բուխերիկ,
Քյո մոր խերիկ,
Ինչքյան ղաննես,
Ջասա խնրիր։

102(1406). ՀՐԱՑԱՆ

Միսը էրկթից
Հագուսար՝ փայտից։

103(1407). ԳԻՐ

Ձեռով գլեմ,
Աչքով քաղեմ։

104(1408). ՈՍԿԻ

Էն ի՞նչն ա խողի մեջ չփթի։

105(1409). ՆԱՎ

Կէթա, կէթա, իզ չկա,
Դառնա հնա՝ թոզ չկա։

106(1410).

Կէրթա, կէրթա, կիրիչկա,
Իշկեմ հետև՝ թող չկա,
Պախեմ՝ ջան չկա,
Մորթեմ՝ արուն չկա։

107(1411).

Նասա հով,
Կթի կով,
Ջմփիկ ղարկի,
Գացի ծով։

108(1412).

Երկնքին սյուն չկա,
Թավրին ծածկոց չկա,
Ձկան մաղ չկա,
Ծտին ոսկոռ չկա։
Հավք մը կիջի երկնքուց
Ոսկե լագան էր կաուց,
Հա էրեց, դու էրեց,
Աշխարքից չորս բան չաարավ։

109(1413). ԱԴԱՄ, ԵՎԱ

Ամպն էկավ՝ խով բերեց,
Եղն ծնավ՝ կով բերեց։

110(1414).

Երկինք՝ խով, գետին՝ ծով,
Եղն ծնավ, բերեց կով։

111(1415). ՀՈՎՀԱՆ ՄԱՐԳԱՐԵ

Էն ո՞րն էր՝ դրին գերեզման,
Գերեզման շարժուն և գնայուն
եղավ։

112(1416). ԵՂԻՍԵ

Էն ո՞ն էր՝ քյսան խացով,
խարիր մարդու գոհացուց,
Գոհացուց, լիացուց,
Երկինք բարձրացուց։

113(1417). ԱԲԵԼ

Էն ո՞ն է, գրին խող,
Խաղն ասաց. ես կույս եմ...

114(1418). ՄԱՐԴԸ

Էն ինչն ա. խող էր
Խող դառավ։

## ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

1(1419). Ախրդ խեր հէղի։
2(1420). Աչկի լուսով ծերնաս։
3(1421). Աստված ըլակներիդ ուժ տա։
4(1422). Աստված քեզ չինի հազար ճղեն։
5(1423). Աստված պահի քեզ քո հոր համար։
6(1424). Աստու աջը քե պահապան։
7(1425). Աստու օրհնություն լավ մարդկանց վրա հեղի։
8(1426). Աստուն դիլաք եմ էրեր, որ քու կյանքում վատ օր չտեսնաս։
9(1427). Աստու օրշնիք թափի վըր քեզի։
10(1428). Աստու բերանն օրշնի քեզ։
11(1429). Արևդ հէրկեն ըլի։
12(1430). Դուռդ փակես, հերթկից լցվի,
Հերթիկ փակես, պոնից լցվի։
13(1431). Դրախտի արքայության բաժին հըլնես։
14(1432). Երգրին խաղաղություն։
15(1433). Ջորանաս, փառավորվես, հէրկեն արև ըլնես։
16(1434). Թասն ընձի, աստու բարին ձեզի։
17(1435). Էն հանդեն ղրախան էթաս։
18(1436). Էն սըբ խաչ, սըբ Ավետարան քե պախպան։
19(1437). Էն անդնեկի տկով հրնցես։
20(1438). Էնա Մարութա սըր Աստվածածին քե օգնական։
21(1439). Օխար որդով սեղան նստես։
22(1440). Խոքիկ Հերուսաղեմա աջակողմին ղավլի։
23(1441). Խոքիդ ղրախաի ղոնով մանի։
24(1442). Տլես, ծաղկես, զորանաս։
25(1443). Տլես, ծաղկես, մեջը նստես։

26(1444). Հայր Աբրահամու օրհնանքն առնես։
27(1445). Հայր Աբրահամու օրշնիքը վրեդ։
28(1446). Հակոբ Հայրապետի օրշնիքը վըր քըլի։
29(1447). Ձեր ծառ ու ճղեր կանչնան։
30(1448). Ձեռդ քարի թալես՝ օսկի կըրի։
31(1449). Մե պատդ օսկի հըլնի, մեկն՝ արծաթ։
32(1450). Մե բարձի ծերանաք։
33(1451). Մեկ դնես, հազար վերցնես։
34(1552). Մուրադ դետի կարմնչով հնցես։
35(1453). Մուրազդ արևով հըլի։
36(1454). Պատերդ օսկով շարես։
37(1455). Ջրի պես երկար կյանք ըլնես։
38(1456). Սիմոն ծերունի հըլնես։
39(1457). Սիպտակ մորուս ըլնես։
40(1458). Ուրախ սրտով, ցամաք աչկով սեղան նստես։
41(1459). Քար թալես, օսկի բռնես։
42(1460). Քու հալալ ճակտի քրտինքը քեզի խամաթ հէղի։
43(1461). Քրիստոսի օրշնիքը քու առհմի վրա էղնի։
44(1462). Քու ծնող դրախտեն հէղի։

## ԱՆԵԾՔՆԵՐ

1(1463). Աղոթեմ՝ աղ առնես,
Բարակ-բարակ ցավ առնես,
Ջպրծնես ատամացավից,
Գլխացավով տապակվես։
2(1464). Ախրդ ոչ ու փուչ ըլի։
3(1465). Աղ ու հացը հաշկդ բռնա։
4(1466). Անձղի կատար ըլնես։
5(1467). Անիծում եմ.
Կերդ կորեկ ըլի,
Գարին հեար կոդ։
6(1468). Անիծում եմ. չդանես խամ կտավ, անես արխալուղ։
7(1469). Աչքիդ սևը սպիտակ անես։
8(1470). Անտակ ծովին ռաստ դաս։
9(1471). Առնողդ չտեսնի քու խերը։
10(1472). Աստված քոր տա, եղունգ չտա։
11(1473). Աստու անեծք վրեդ հէղի։
12(1474). Աստված քո տուն ավրի։
13(1475). Արեդ խըմրի։
14(1476). Արեն օր դուս կիդա, քեզի չդիպչի։
15(1477). Բտրելական կըակ թափվի վըր քե։
16(1478). Բալի երես չտեսնես։
17(1479). Բախտեբախտ ընկնես։
18(1480). Բերանդ կաըվի, չորանա։
19(1481). Բերնիցդ դուս գա, ծոցդ լցվի։
20(1482). Բեմուրազ մնաս։
21(1483). Բկիդ կայնի։
22(1484). Բռնողդ մեկ ըլի, փրթողդ՝ հազար ու մեկ։
23(1485). Գաբրիելը քեզ տանի։
24(1486). Գելերու, շներու փայ դառնաս։
25(1487). Գետինը մանես։
26(1488). Գիշեր-ցերեկ խաչվես, իմ դեմ կայնես։
27(1489). Գլոխդ ցխեմ։
28(1490). Գլխիդ գլխավոր չըլի։
29(1491). Գլխիդ կըակ թափվի։
30(1492). Գյարդանդ խըխմի։
31(1493). Գյոռբադյոռ ըլնես։
32(1494). Գյոռին չմնաս, շան, գելի փայ ըլնես։
33(1495). Գյուլլախորով ըլնես։
34(1496). Գրողի դիլլեն ղանեմ չիդրիդ օրթլադ տեղը։
35(1497). Գրողի դավթրում գրեմ անունդ։
36(1498). Գրողի փայ դառնաս։
37(1499). Գրողի ծոց գնաս։
38(1500). Դատաստան չմանես, պատասխան չի տաս։
39(1501). Դժոխքի ծնունդ։
40(1502). Էլած-չեղածդ շան, գիլու բաժին դառնա։
41(1503). Թազա մնան չորերդ։
42(1504). Թունդիրդ անկրակ մնա։
43(1505). Ժողովրդկանություն էնես։
44(1506). Լավ օր չտեսնաս,
Կանաչ անդ կթաս քար դառնա, վրեդ թափի։
45(1507). Լավ օր ու արևի կարոտ մնաս։
46(1508). Լեզուդ պապանձվի։
47(1509). Լեզուդ չորանա։
48(1510). Խոդ ու փոշին վըր քո արևուն։
49(1511). Խողը գլխուդ, փոշին՝ արևուդ։
50(1512). Խողը գլխիդ։
51(1513). Խոքիդ կպրե կտրաս ընդնի։
52(1514). Ծակ ու պաարուք սպրես։
53(1515). Կանաչ թաբութը դնեմ։
54(1516). Կանաչդ չորանա, չոր քարին կպչի։
55(1517). Կարոտ ղովլաթիդ ու փափաղով դանձիդ մնաս, րալքի։
56(1518). Հադամ պուպուզ տեսնաս, լաս։
57(1519). Հաշկի լուսից հրնդնես, խավարես։
58(1520). Հաշկդ բռնա։
59(1521). Հավուր դատաստանին ռաստ գաս։
60(1522). Հընկնավորես։
61(1523). Հորդ օջախը վարենք, ցանենք։
62(1524). Ձեռդ՝ ծոցումդ, աչքդ հուրիշին մնա։